ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում մասնագիտության սահմանման

Բովանդակություն

Ներածություն 3
Պաշտոնի անձնագրում մասնագիտությունների սահմանման ձևաչափեր 6
Ծանոթագրություն..... 13

Ներածություն

Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում ներառվող տեղեկություններից է տվյալ պաշտոնի համար պահանջվող կրթությունը (մասնագիտությունը):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» N 1191-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կրթությունը սահմանելու համար անհրաժեշտ է հիմք ընդունել Որոշմամբ հաստատված ցանկում ներառված մասնագիտությունները:

Որոշմամբ սահմանված մասնագիտությունները խմբավորված են ըստ մասնագիտությունների ուղղությունների, որոնք ներառում են որոշակի մասնագիտությունների ոլորտներ, որոնք էլ իրենց հերթին կազմված են կոնկրետ մասնագիտություններ պարունակող ենթաոլորտներից: Պաշտոնի անձնագրում որպես կրթության չափանիշ կարող են սահմանվել **մասնագիտությունների ուղղություններ**, **մասնագիտությունների ոլորտներ**, **մասնագիտությունների ենթաոլորտներ** և **առանձին մասնագիտություն (մասնագիտություններ)**՝ տարբեր համադրություններով, մասնավորապես՝ մասնագիտությունների մեկ ամբողջական ուղղությունը կարող է համադրվել մասնագիտությունների մեկ ամբողջական ոլորտի հետ, կամ մասնագիտությունների մեկից ավելի ամբողջական ոլորտները կարող են համադրվել մեկ ամբողջական ենթաոլորտի հետ, կամ մասնագիտությունների մեկ

ամբողջական ուղղությունը կարող է համադրվել կոնկրետ մասնագիտության հետ կամ կոնկրետ մասնագիտությունը կարող է համադրվել կոնկրետ մասնագիտության հետ և այլն:

Որոշմամբ սահմանված մասնագիտությունները ներառող ուղղությունները, ոլորտները, ենթաոլորտները ներկայացված են ծածկագրերով, իսկ մասնագիտությունները՝ դասիչներով (ծածկագրերով): Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում մասնագիտությունները սահմանելիս ծածկագրերը չեն նշվում:

Ստորև նշված աղյուսակում ներկայացվում են մասնագիտությունների խմբավորման տեսակները.

Աղյուսակ

N	***Մասնագիտությունների խմբավորումը***	***Անվանումը***
1.	Մասնագիտությունների ուղղություն	մասնագիտությունների համապատասխան ուղղության անվանումը
2.	Մասնագիտությունների ոլորտ	մասնագիտությունների համապատասխան ոլորտի անվանումը
3.	Մասնագիտությունների ենթաոլորտ	մասնագիտությունների համապատասխան ենթաոլորտի անվանումը
4.	Մասնագիտություն	Համապատասխան մասնագիտության անվանումը

Օրինակ՝

Որոշման հավելվածով սահմանված «**04 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ»** տողը համարվում է **մասնագիտությունների ուղղություն:**

1.Մասնագիտությունների ուղղություն	ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Որոշման հավելվածով սահմանված **«041 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»** տողը համարվում է «04 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ուղղության **մասնագիտությունների ոլորտ:**

2.Մասնագիտությունների ոլորտ	ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Որոշման հավելվածով սահմանված «**0413 Կառավարում և վարչարարություն»** տողը համարվում է «04 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ուղղության «041 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ոլորտի «0413 Կառավարում և վարչարարություն» **մասնագիտությունների ենթաոլորտ:**

3.Մասնագիտությունների ենթաոլորտ	0413 Կառավարում և վարչարարություն

Որոշման հավելվածով սահմանված «**Կառավարում»** տողը համարվում է «04 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ուղղության 041 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ոլորտի «0413 Կառավարում և վարչարարություն» մասնագիտությունների ենթաոլորտի **կոնկրետ մասնագիտություն:**

4.Մասնագիտություն	Կառավարում

Պաշտոնի անձնագրում մասնագիտությունների սահմանման ձևաչափեր

1. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների երկու և ավելի ուղղություններում ընդգրկված բոլոր ոլորտներն ու դրանցում ներառված ենթաոլորտներում ընդգրկված մասնագիտություններն ամբողջությամբ**, ապա տվյալ դեպքում համապատասխան ոլորտները, ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները չեն նշվում և աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	**Ուղղություն**	***Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ***	***Գործարարություն, վարչարարություն և իրավունք***

2. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեկ ամբողջական ոլորտում ընդգրկված բոլոր ենթաոլորտներն ու դրանցում ներառված բոլոր մասնագիտությունները**, ապա տվյալ դեպքում համապատասխան ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները չեն նշվում և աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2	**Ոլորտ**	***Գործարարություն և վարչարարություն***

3. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մի քանի ոլորտներում ընդգրկված բոլոր ենթաոլորտներն ու դրանցում ներառված բոլոր մասնագիտությունները**, ապա տվյալ դեպքում համապատասխան ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները չեն նշվում և աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք

2	**Ոլորտ**	***Գործարարություն և վարչարարություն***	***Իրավունք***

4. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների մեկ ուղղության մեջ ընդգրկված բոլոր ոլորտներն ու դրանցում ներառված ենթաոլորտներում ընդգրկված մասնագիտություններն ամբողջությամբ** և միաժամանակ՝ **մեկ այլ ուղղության մեկ կամ մի քանի ամբողջական ոլորտում ընդգրկված ենթաոլորտներն ու դրանցում ներառված մասնագիտություններն ամբողջությամբ**, ապա առաջին դեպքում չեն լրացվում համապատասխան ոլորտները, ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները, իսկ երկրորդ դեպքում չեն լրացվում համապատասխան ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները: Արդյունքում, աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	**Ուղղություն**	***Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ***	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2	**Ոլորտ**		***Գործարարություն և վարչարարություն*** կամ ***իրավունք***

5. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի միևնույն ենթաոլորտի բոլոր մասնագիտությունները,** ապա տվյալ դեպքում համապատասխան ենթաոլորտում ներառված մասնագիտությունները չեն նշվում և աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	**Ենթաոլորտ**	***Միջոլորտային մասնագիտություններ***

6. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի մեկից ավելի ենթաոլորտներում ներառված մասնագիտություններն** ամբողջությամբ, ապա տվյալ դեպքում համապատասխան մասնագիտությունները չեն նշվում և աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն		
2	Ոլորտ	Ճարտարագիտություն		
3	**Ենթաոլորտ**	***Շրջակա միջավայրի պահպանություն***	***Էներգետիկա և էլեկտրատեխնիկա***	***Ցամաքային և օդային փոխադրամիջոցներ***

7. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների մեկ ուղղության մեջ ընդգրկված բոլոր ոլորտներն ու դրանցում ներառված ենթաոլորտներում ներառված մասնագիտություններն ամբողջությամբ** և **մեկ այլ ուղղության կոնկրետ ոլորտում ընդգրկված մեկ կամ մի քանի ենթաոլորտներն ու դրանցում ներառված մասնագիտություններն ամբողջությամբ**, ապա առաջին դեպքում չեն լրացվում համապատասխան ոլորտները, ենթաոլորտները և դրանցում ներառված մասնագիտությունները, իսկ երկրորդ դեպքում չեն լրացվում համապատասխան ենթաոլորտներում ներառված մասնագիտությունները: Արդյունքում, աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	**Ուղղություն**	***Գործարարություն, վարչարարություն և իրավունք***	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ		Սոցիալական և վարքաբանական գիտություններ

3	**Ենթաոլորտ**		***Տնտեսագիտություն*** կամ ***Միջոլորտային մասնագիտություններ***

8. Եթե պաշտոնի անձնագրում անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի որևէ ենթաոլորտի մեջ ներառված կոնկրետ մասնագիտություն**, ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	Ենթաոլորտ	Տնտեսագիտություն
4	**Մասնագիտություն**	***Տնտեսագիտություն***

9. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի որևէ ենթաոլորտի մեկից ավելի մասնագիտություններ**, ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	Ենթաոլորտ	Միջոլորտային մասնագիտություններ
4	**Մասնագիտություն**	***Միջազգային հարաբերություններ*** կամ ***Հասարակայնության հետ կապեր***

10. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի մեկից ավելի ենթաոլորտներից մեկական մասնագիտություն**, ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն

2	Ոլորտ	Ճարտարագիտություն	
3	Ենթաոլորտ	Էներգետիկա և էլեկտրատեխնիկա	Մետալուրգիա և մեքենաշինություն
4	**Մասնագիտություն**	***Էլեկտրատեխնիկա***	***Տրանսպորտային մեքենաշինություն***

11. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի տարբեր ենթաոլորտներից մեկից ավելի մասնագիտություններ**, ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	
2	Ոլորտ	Ճարտարագիտություն	
3	Ենթաոլորտ	Մետալուրգիա և մեքենաշինություն	Էլեկտրոնիկա և ավտոմատացում
4	**Մասնագիտություն**	***Մետալուրգիա*** կամ ***Մեքենագիտություն*** կամ ***Տրանսպորտային մեքենաշինություն***	***Ռադիոտեխնիկա և կապ*** կամ ***Ավտոմատացում***

12. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի մեկից ավելի ենթաոլորտներից մեկում ներառված մասնագիտություններն ամբողջությամբ և մյուս ենթաոլորտից մեկ մասնագիտություն**, ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	
2	Ոլորտ	Ճարտարագիտություն	
3	**Ենթաոլորտ**	***Մետալուրգիա և մեքենաշինություն***	Շրջակա միջավայրի պահպանություն
4	**Մասնագիտություն**		***Շրջակա միջավայրի պահպանություն***

13. Եթե անհրաժեշտ է սահմանել **մասնագիտությունների միևնույն ուղղության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի մեկ ենթաոլորտում ներառված բոլոր մասնագիտությունները՝ բացառությամբ մեկի,** ապա աղյուսակը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

1	Ուղղություն	Տեղեկատվական և հաղորդակցան տեխնոլոգիաներ (ՏՀՏ)
2	Ոլորտ	Տեղեկատվական և հաղորդակցան տեխնոլոգիաներ (ՏՀՏ)
3	Ենթաոլորտ	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
4	**Մասնագիտություն**	***Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)*** կամ ***Ծրագրային ճարտարագիտություն*** կամ ***Համակարգչային ճարտարագիտություն*** կամ ***Տեղեկատվական տեխնոլոգիաներ***

1-ից 13-րդ կետերում ներկայացված են մասնագիտությունների համադրությունների մի քանի պայմանական օրինակներ, սակայն անհրաժեշտությունից ելնելով, կարող են սահմանվել այլ համադրություններ:

Պաշտոնի անձնագրում մասնագիտությունների որևէ ամբողջական խմբավորում (օրինակ՝ մասնագիտությունների **ուղղություն** կամ մասնագիտությունների **ոլորտ,** կամ մասնագիտությունների **ենթաոլորտ**) նշելու դեպքում անհրաժեշտ է նշումը սկսել այն ներառող խմբավորումից(ներից), իսկ նրանում ընդգրկված խմբավորումները (մասնագիտությունները) չեն նշվում:

Օրինակ՝ **Սոցիալական և վարքաբանական գիտություններ** մասնագիտությունների ոլորտն ամբողջությամբ սահմանելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտի հետ միաժամանակ նշել **Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ** մասնագիտությունների ուղղությունը՝ չնշելով տվյալ ոլորտում ներառված մասնագիտությունների ենթաոլորտներն ու մասնագիտությունները:

Պաշտոնի անձնագրում մասնագիտությունները սահմանվում են անձնագրի 3.1-ին կետում՝ աղյուսակի տեսքով.

Օրինակ՝ **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

1	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	Ենթաոլորտ	Տնտեսագիտություն
4	**Մասնագիտություն**	***Տնտեսագիտություն***

Պաշտոնի անձնագրում մագիստրոսի որակավորման աստիճան սահմանելու դեպքում պետք է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, իսկ համապատասխան տվյալը լրացնել մասնագիտության պահանջը սահմանող աղյուսակից հետո՝ հետևյալ ձևաչափով.

Օրինակ՝ **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

1	Ուղղություն	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)
2	Ոլորտ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)
3	**Ենթաոլորտ**	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
4	**Մասնագիտություն**	***Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)*** կամ ***Ծրագրային ճարտարագիտություն*** կամ ***Համակարգչային ճարտարագիտություն*** կամ ***Տեղեկատվական տեխնոլոգիաներ***

Որակավորման աստիճանը՝ մագիստրոս:

Ծանոթագրություն

Պաշտոնի անձնագրում մասնագիտությունների ուղղությունները, մասնագիտությունների ոլորտները, մասնագիտությունների ենթաոլորտները և մասնագիտությունները լրացնելիս Որոշման հավելվածում նշված համապատասխան դասիչները (ծածկագրերը) չեն գրվում, բացառությամբ «Իրավագիտություն» մասնագիտության, որի դեպքում ծածկագիրը նշվում է այդ մասնագիտությամբ ԵՊՀ-ի և Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կողմից մասնագիտական ուսուցման արդյունքում տրված համապատասխանաբար «իրավաբանի» և «մանկավարժի» որակավորման պահանջները տարանջատելու նպատակով:

Եթե պաշտոնի անձնագրում անհրաժեշտ է սահմանել այնպիսի մասնագիտություն(ներ), որը ներառված չէ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N 647-Ա/Ք հրամանով հաստատված մասնագիտությունների ցանկում, ապա համապատասխան մարմինը՝ մինչև պաշտոնի անձնագրի նախագիծը Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) համաձայնեցմանը ներկայացնելը, պետք է դիմի Գրասենյակ՝ հիշյալ խնդրի պարզաբանման նպատակով: